

Թեան ստուեր մը եղեր է հոն, բայց ատիկա քիչ բան մըն է եւ մենք ապերախտութեան տըխտըր ապացոյց մը տուինք Իտալիոյ մեր բաեկամներուն :

III

ԼՈՒՅՅՍՏՏԻ ԵՒ ԴԻԶՐԱՅԷԼԻ

Շատ անգամ մերայինք դանդատուեր են, թէ հրէաները գէշ վարուած են մեզի հետ, թէ համիդեան ու այլ ջարդերու ընթացքին անոնք մատներ են հայերը, կողոպտեր են անոնց տները եւ այլն : Եղեր են նաեւ մտաւորական, գիտնական հրէաներ, որոնք, թշնամարար տրամադրուած դէպի մեզ, ձգտեր են վարկաբեկ ընել հայութիւնը աշխարհի հանրային կարծիքի առջև : Յիշենք տիրահռչակ վամբերին, մաջաո-հրէայ թիւրքամոլ գիտնականը, որին դեռ Գրիգոր Արծրունի յորջորջեր էր «վամպիր» անունով : Յիշենք Սվէն Հեղինը, շվեդ-հրէայ աշխարհահռչակ գիտնական-տուրիստը, որ իր գրքերու մէջ նոյն վամբերիական մտայնութիւնը կը ցուցահանէր եւ 1916-ի նոյեմբերին Ստոքհոլմի իր բնակարանի մէջ, ինձի հակաճառելով, կը ձգտէր արդարացնել թիւրք ջարդարարները : (Սվէն Հեղին Վիլհելմ կայսրի անձնական բարեկամն էր եւ հայոց ջարդերէն յետոյ պտոյտ մը կատարած էր թիւրքիոյ մէջ : Անոր թիւրքամոլ ընթացքը հրապարակով խարանեցին շվեդ հայասէրները, մասնաւորապէս յայտնի ժողովրդական գրող Օսսեան-Նիլսէն :

Եղեր են, անշուշտ, ուրիշներ եւս — վամբերիի եւ Սվեն Հեղինի նմաններ :

Կարելի է ըսել, Լուսցատտի մը իր գեղեցիկ, իր վեհանձն հայասիրութեամբ կը քաւէ եւ կը լուայ իր ցեղակիցներու մեղքերը... Լուսցատտիին հետ՝ փայլուն շարան մը հռչակաւոր եւրոպացիներու, — հրէական ծաղում ունեցող — որոնք մեր դատը որդեգրեցին եւ դայն պաշտպանեցին հեղինակաւոր ձայնով... Ահա Մօրգենթաու, Գէորդ Բրանդէս, Անատոլ Փրանս, Էդուարդ Բերնշտայն եւ բազմաթիւ ուրիշներ :

Բայց մէկը կայ — մէկ հրէածին անգլիացի — որ իր քաղաքականութեամբ ահռելի չա-

րիքներ հասցուց հայ ժողովրդին, — չարիքներ, զոր ոչ իսկ Լուսցատտիները կրնան մոռցնել տալ :

Դա համբաւաւոր Լօրդ Բիկոնսֆիլդն է, աւելի ծանօթ իր իսկական անունով — դիքրայէլի : Անգլիոյ հռչակաւոր պահպանողական վարչապետը, որ 1878-ին թելադրեց Բերլինի վեհաժողովին փոխարինել հայոց 16-րդ յօդուածը 61-րդ յօդուածով, որու շնորհիւ Հայաստանի մեծազոյն հատուածը շարունակեց մնալ թրքական լուծին տակ եւ շարունակեց աստիճանաբար յօշոտուիլ : Չեմ ուզեր ըսել, թէ ուրիշ մէկու վարչապետութեամբ անգլիական քաղաքականութիւնը — աւանդականօրէն հակառուս — չպիտի բռնէր նոյն ընթացքը... Այսպէս թէ այնպէս, Դիքրայէլի կառավարութիւնն էր հակահայկական այդ մեծ ոճրի հեղինակը, եւ եթէ Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը չը ջնջուէր, այսօր պիտի ունենայինք 6-7 միլիոնի չափ հոծ հայութիւն բողբուիկեան կայսրութեան մէջ, որու դէմ, հաւանականօրէն, անգոր պիտի լինէին թէ Մոսկուայի ռոմանթիկները եւ թէ կովկասեան մեր դրացիներու յաւիտենական դաւերը...

IV

ՀՐԷԱՆԵՐ ԵՒ ՀԱՅԵՐ

Դիքրայէլի եւ Լուսցատտի — այն զոյգ դէմքերն են, որոնք, լինելով հանդերձ ամենէն հալածական եւ ամենէն արհամարհուած ցեղի մը՝ հրէութեան՝ զուակներ — նուաճեցին նախարարապետութեան բարձրագոյն աստիճանը արեւմտեան մեծ պետութիւններու մէջ. մէկը՝ Անգլիոյ, միւրը՝ Իտալիոյ մէջ :

Ուշադրաւ զուգադիպութիւն մըն է, որ միւս հալածական ցեղն եւս՝ հայութիւնը — հրէաներէն նուազ արհամարհուած, բայց թըլով աւելի փոքրիկ եւ ճակատագրով աւելի դժբախտ, ենթակայ մեծ մասամբ արեւելեան ամենադաժան բռնակալութեանց — տուեր է մեծ պետութիւններուն նոյնպէս զոյգ մը խոշոր դէմքեր, որոնք հասեր են ամենաբարձր աստիճաններու : Մէկը՝ Լօրիս-Միլիքով, որ Ռուսաստանի վարչապետ եղաւ՝ 1880 թուականին, միւրը՝ Դաւիթ Արբահամովիչ, որ աս-